

В статье детально представлены изменения по части отдельных видов налога. Указываются основные направления государственных реформ.

## THE ROLE OF TAX REFORMS IN THE CONTEXT OF FORMATION OF STATE BUDGET INCOMES

*G. A. Khachatryan*

In the modern conditions of market economy the tax reforms are inclined to complete the state budget with incomes and to provide a high level of economic activity for the country as well. The article presents the changes concerning the separate tax forms. Besides it points out the main directions of tax reforms.

## ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԾԱԿՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

**Գ. Յ. ԱՌԱԲԵԼՅԱՆ**

*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

**Ա. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**

*ԴՊՃԴ ասպիրանտ*

**Ա. Լ. ՄԵԼքոնյան**

*ԴՊՃԴ մագիստրոս*

Իրենց ճյուղում երկար և արդյունավետ մրցակցելու, մրցակիցների նկատմամբ առաջատար դիրք գրադեցնելու համար կազմակերպությունները մշակում ու իրագործում են մրցակցային ռազմավարություն: Նրանք միայն ճկուն և դիմանիկ մրցակցային ռազմավարության շնորհիվ կարող են ապահովել մրցակցային առավելություններ և բարձրացնել իրենց գործունեության արդյունավետությունը: Ուստի կազմակերպության մրցակցային ռազմավարությունը հանդիսանում է մրցակցային պայքարում հաջողության հասնելու պարտադիր պայմաններից մեկը:


Մրցակցային ռազմավարության գործընթացի կազմակերպման համար մեթոդաբանական մեծ նշանակություն է ծերք բերում ռազմավարական վերլուծության փուլը: Գիտական գրականության մեջ գերակշռում է այն տեսակետը, որ վերջինս հաջորդում է նպատակների ձևավորմանը՝ հանդիսանալով ռազմավարության՝ որպես գործընթացի հաջորդական փուլը: Սակայն ներկա տնտեսական հարաբերությունների զարգացման պայմաններում ռազմավարական վերլուծությունը դուրս է գալիս այդ տեսակետի շրջանակներից և բնութագրվում իրու ռազմավարության գործընթացի բոլոր տարրերի ձևավորման հիմքն ու անմիջական բաղադրիչը:

Ելնելով մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեցող մոտեցումներից և մեր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքներից՝

առաջարկում ենք կազմակերպությունների նրանցային ռազմավարության մշակման նոր գործընթացային մոտեցում՝ կարևորելով վերլուծության դերը նրանցային ռազմավարության մշակման յուրաքանչյուր փուլում, ինչպես նաև տարբեր փուլերի տրամաբանական կապերի ապահովման գործում (գծապատկեր 1):

Այս մոտեցման առանձնահատկությունն այն է, որ ցանկացած կազմակերպություն, գտնվելով իրեն շրջապատող միջավայրի գործոնների ազդեցության ներքո, և ինքն էլ իր հերթին ինչ-որ չափով ազդեցություն ունենալով այդ միջավայրի վրա, պետք է նախ և առաջ իրականացնի հանգամանալից ուսումնասիրություն, որն ուղեկցվում է ռազմավարական վերլուծությամբ:

Միջազգային պրակտիկայում ռազմավարական վերլուծության համար կիրավում են մի շարք մեթոդներ, որոնցից ամենատարածվածն են PEST, SWOT վերլուծությունները, բենշմարքեթինգը, Վ. Լաշերի ճյուղի բնութագրության, Մ. Պորտերի հիմնացային ուժերի մոդելները, ռազմավարական խմբերի քարտեզի ռեսուրսային մոտեցման մեթոդները և այլն:



**Գծապատկեր 1.** Մրցակցային ռազմավարության ընդհանրական գործընթացը:

Կազմակերպության արտաքին միջավայրի գործոնները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ շրջակա միջավայրի ընդհանուր գործոններ և ճյուղի հետ անմիջական առնչվող գործոններ: PEST վերլուծությունը շրջակա միջավայրի բազմաթիվ տարրերից առանձնացնում է քաղաքական, տնտեսական, սոցիալական ու տեխնոլոգիական գործոնները և որոշում դրանց ազդեցության աստիճանը կազմակերպության ռազմավարության վրա: Սակայն կոնկրետ իրավիճակներում այդ գործոնները տարբեր ձևերով են ներգործում: Այսպես, զարգացած երկրներում կազմակերպությունների ռազմավարության համար PEST վերլուծության տարրերից առաջնահերթ ու առավել կարևոր է քաղաքական և իրավական դաշտի ձևավորումը, ինչը պայմանավորված է անհրաժեշտ գործառար միջավայրի ստեղծմամբ: Այնուամենայնիվ, PEST վերլուծության հաճախակի իրականացումը հնարավորություն է տալիս ճիշտ գնահատել ռազմավարական իրավիճակը:

Արտաքին միջավայրի վերլուծության առանձին ուղղություն է հանդիսանում ճյուղի վերլուծությունը: Գոյություն ունեն ճյուղի վերլուծության տարբեր մեթոդներ, սակայն ավելի նպատակահարմար է այն իրականացնել հետևյալ հաջորդական քայլերով՝

- վերլուծել ճյուղի հիմնական բնութագրերը,

- ուսումնասիրել մրցակցային իրավիճակը ճյուղում,
- բացահայտել ճյուղի ռազմավարական խնդերը,
- որոշել հաջողության հասնելու կարևոր գործոնները:

Ճյուղի հիմնական բնութագրերի և առանձնահատկությունների վերլուծությունը պահանջում է վերհանել ճյուղի ու շուկայի փոխադարձ կապը: ճյուղը միատեսակ ապրանքներ արտադրող և ծառայություններ մատուցող կազմակերպությունների ամբողջություն է, որոնք գտնվում են մրցակցության մեջ: Իսկ շուկաները պահանջում են ճյուղերի կողմից արտադրված ապրանքներն ու ծառայությունները: Այլ կերպ ասած, տնտեսական համակարգում ճյուղերը հանդիսանում են առաջարկի ոլորտ, իսկ շուկաները՝ պահանջարկի:

Տնտեսագիտական գրականության մեջ շուկայի էության վերաբերյալ գոյություն ունեցող մոտեցումները ընդհանրացրած ձևով կարելի է ներկայացնել երկու խմբով: Առաջին խմբի ներկայացուցիչները շուկան դիտարկում են լայն իմաստով՝ այն ներկայացնելով որպես ինքնուրույն որոշումներ կայացնող առանձին տնտեսվարող սուբյեկտների միջև փոխհարաբերությունների և կապերի ձև<sup>1</sup>: Իսկ երկրորդ խմբի ներկայացուցիչները շուկան դիտարկում են նեղ իմաստով (որպես պահանջարկը և առաջարկը որոշող մեխանիզմ): Ըստ այդմ, շուկան հանդիսանում է առանձին ապրանքների և ծառայությունների գնորդներին (պահանջարկ ներկայացնողներին) և վաճառողներին (նատակարարներին) մի տեղ բերող ինստիտուտ կամ մեխանիզմ<sup>2</sup>:

Գ. Ազուրը, քննարկելով մրցակցության տեսության էվոլյուցիան, XX դարի կեսերին առանձնացրել է շուկայական կառուցվածքի չօրու դասական մոդելներ՝ զուտ կամ կատարյալ մրցակցություն, մենաշնորհային մրցակցություն, օլիգոպոլիստական մրցակցություն, զուտ մենաշնորհ<sup>3</sup>:

Ներկայումս, ըստ զուտ շուկայի սուբյեկտների, դրանց բաժինների, շուկայի մուտքի խոչընդուների, ապրանքների տարրերակման աստիճանի՝ առանձնացվում են շուկայի կառուցվածքի մի քանի տեսակներ:

Ճյուղերի և շուկաների վերլուծությունը հնարավորություն է տալիս ձեռնարկություններին.

- առանձնացնել այն ճյուղերը, որտեղ կարող են իրականացնել իրենց գործունեությունը,
  - ընտրել այն շուկաները, որտեղ պետք է մրցակցել,
  - ուսումնասիրել գնորդներին և նրանց պահանջների բնույթը,
  - պարզել տվյալ կամ ուրիշ ճյուղերի պոտենցիալ մրցակիցների մարտարավերները,
  - առանձնացնել այն շուկաները, որոնցից պետք է ստացվեն իրենց ռեսուրսները:

<sup>1</sup> Ст. Рыночная экономика. Учебник в трех томах., т. 1, Теория рыночной экономики, М., "СОМИНТЕК", 1991, с. 24.

<sup>2</sup> Ст. Е. В. Попов, Б. Клюев, Методы маркетинговых исследований. Екатеринбург: Урал. гос. тех. ун-т., 1996, с. 61.

<sup>3</sup> Ст. Г. Л. Азое, Конкуренция, анализ, стратегия и практика. М., "Центр экономики и маркетинга", 1996, с. 61.

Ծյուղի կառուցվածքի վերլուծությունը կարևորվում է նաև նրանով, որ մրցակցության մակարդակը տարբեր ծյուղերում խիստ տարբերվում է, և տարբեր են նաև եկամուտների ստացման հնարավորությունները:

Ծյուղի հիմնական առանձնահատկությունների վերհանման համար կարելի է կիրառել Վ. Լաշերի կողմից առաջարկված հետևյալ հիմնական չափանիշները<sup>4</sup>:

- Ծյուղի եկամուտը բույրությունը, ինչը պետք է լուրջ ուսումնասիրել նոր ծյուղ մուտք գործելիս, քանի որ գոեթե բոլոր ձեռնարկությունների հիմնական խնդիրը հանդիսանում է կարճ ժամանակահատվածում առավելագույն շահույթի ապահովումը:

● Ծյուղի տեխնոլոգիական փոփոխությունները, որի վերլուծությունը հնարավորություն է տալիս մանրամասն ուսումնասիրել տեխնոլոգիաների անընդհատ փոփոխությունների ազդեցությունը ծյուղի վրա, ինչն էլ խթանում է ձեռնարկություններին՝ մշտապես շուկա ներկայացնել մրցունակ արտադրատեսակներ և ծառայություններ:

● Ծյուղի կենսացիկլը. այն ենթադրում է ծյուղի կանխատեսվող գարգացման հավանական ճանապարհները՝ ծագում, աճ, հասունացում, անկում և հնարավորություն է տալիս ձեռնարկություններին ճիշտ գնահատել իրենց դիրքը ծյուղում:

- Շուկայի չափը ու կառուցվածքը, ինչի հստակեցումը խթանում է ավելի ճիշտ պատկերացում կազմել կոնկրետ շուկայի վերաբերյալ:

Յատկապես անհրաժեշտ է վերլուծել ապրանքային շուկայի մրցակցային միջավայրի գնահատման հիմքում ընկած հետևյալ չափանիշները՝ շուկայի սահմանները, սուբյեկտները, ծավալը և տնտեսավարող սուբյեկտների բաժինները շուկայում:

Ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանի բացահայտումը ենթադրում է ապրանքի և դրա փոխարինելի ապրանքի որոշման գործընթաց<sup>5</sup>: Այն կարող է որոշվել ինչպես սոցիալական կամ փորձագիտական հարցումների, այնպես էլ պահանջարկի խաչաձև առաձգականության գարծակցի միջոցով՝

$$E_{xy} = \frac{x}{y}, \text{ որտեղ } \quad (1)$$

$x$ -ը ապրանքի պահանջարկի տոկոսային փոփոխությունն է, իսկ  $y$ -ը՝ ապրանքի գնի տոկոսային փոփոխությունը:

Այս գործակիցը ցույց է տալիս, թե  $y$ -ապրանքի գնի մեկ տոկոս փոփոխության դեպքում քանի տոկոսով կփոփոխվի  $x$ -ապրանքի պահանջարկը կամ  $y$ -ապրանքի գնի քանի տոկոսի փոփոխությունը կհանգեցնի  $x$ -ապրանքի պահանջարկի մեկ տոկոսի փոփոխությանը: Ընդ որում, եթե  $E_{xy}>0$ , ապա  $x$  և  $y$  ապրանքները փոխադարձ փոխարինելի են, հակառակ դեպքում՝ փոխադարձ լրացնող: Իսկ գործակցի գրոյական արժեքը վկայում է, որ ապրանքը փոխարինելի չէ:

Որպես կանոն, գնորդը կարձագանքի գնի փոփոխությանը, եթե այն զգալի է: Քանի որ գնի զգալի փոփոխության վերաբերյալ չկա ճշգրիտ սահմանում, ապա

<sup>4</sup> Տե՛ս **W. Lasher.** Strategic Thinking for smaller Businesses and Divisions, Blackwell, Morden, MA., 1999.

<sup>5</sup> Ապրանքային շուկաների ծավալների որոշման կարգ, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի պաշտոնական տեղեկագիր, N 1, 2002:

որոշ երկրներ, օրինակ՝ ԱՄՆ-ը և Կանադան, գնի մինչև 5% փոփոխությունը համարում են ոչ զգալի:

Ապրանքատեսակային սահմանը որոշելիս 5% սահմանագծի գերազանցումը զգալի է համարվում նաև մրցակցության հարցերով զբաղվող մասնագետների կարծիքով և տարբեր երկրների օրենսդրություններում<sup>6</sup>: Գնորդների արձագանքը տարբեր ապրանքատեսակների և ժամկետների համար տարբեր է: Ապրանքների գների բարձրացման զգալիությունը գնահատելու համար անրաժեշտ է մոտեցում ցուցաբերել և առաջին անրաժեշտության ապրանքների, մասնավորապես՝ սննդամթերքի, գների 5%-ից ավելի բարձրացումը համարել արդեն իսկ զգալի, իսկ երկարատև օգտագործման ապրանքատեսակների գների մինչև 10 տոկոս բարձրացումը՝ դեռևս ոչ զգալի:

Ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանի որոշման մոտեցման հիմքում ևս ընկած է գնորդների կարծիքը: Եթե մի տարածքում վաճառվող ապրանքի գնորդները դրա գնի զգալի բարձրացման դեպքում սկսեն այդ նույն ապրանքից ծեռք բերել մեկ ուրիշ տարածքից, ապա այդ երկու տարածքները այդ ապրանքի նկատմամբ կգտնվեն միևնույն աշխարհագրական սահմանում: Ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանները որոշվում են բնական, տնտեսական, տեխնոլոգիական, վարչական պայմաններով, որոնք գնորդների հնարավորությունները սահմանափակում են ապրանքը միայն որոշակի տարածքում ծեռք բերելու ընտրությամբ<sup>7</sup>: Շուկայի սահմանի վերլուծությունը ավելի հստակեցնելու համար անրաժեշտ է հաշվի առնել, որ ապրանքի մեծածախ վաճառքը այլ շուկա է, մանրածախը՝ այլ:

Շուկայի սուբյեկտները ապրանք վաճառողները և գնորդներն են: Որպես վաճառողներ հանդես են զալիս տնտեսվարող սուբյեկտները, որոնք վաճառում են իրենց աշխատանքը կամ անձնական աշխատանքի արդյունքները: Որպես գնորդներ հանդես են զալիս վերջնական արտադրանքի սպառողները, մանրածախ, մանրամեծածախ և մեծածախ առևտրային միջնորդները, ինչպես նաև արտադրական սպառնան նպատակով ապրանք ծեռքբերող տնտեսվարող սուբյեկտը, որը միաժամանակ կարող է հայտնվել երկու տարբեր աշխարհագրական սահմաններում, հետևաբար՝ երկու տարբեր շուկաներում:

Շուկայի ծավալը կարող է որոշվել արժեքային կամ բնեղեն արտահայտությամբ: Որպես կանոն, միատարր ապրանքատեսակների համար շուկայի ծավալը որոշվում է բնեղեն արտահայտությամբ՝ հետևյալ բանաձևով<sup>8</sup>:

<sup>6</sup>Տես 2004թ. փետրվարի 23-ից մարտի 5-ը Վիեննայում կայացած «Մրցակցային քաղաքանություն» թեմայով սեմինարի նյութերը:

<sup>7</sup>Տես **C. A. Черненко.** Конкуренция и антимонопольное регулирование. Границы товарных рынков, Конкуренция. Вестник антимонопольного комитета Украины, 2002.

<sup>8</sup>Այս և սույն հոդվածում բերվող աղբյուրները, չմատնանշված հետագա բանաձևերը տես «Конкуренция и антимонопольное регулирование», учебное пособие, Методические рекомендации по определению границ и объемов товарных рынков, Методика определения монопольного (доминирующего) положения субъектов хозяйствования на рынке. Утв. 5.03.2002, N 49, «Սույնային մերուժական ցուցումներում», «Ապրանքային շուկաների սահմանների և ծավալների որոշման կարգում» և այլն:

$$Q = \sum_{i=1}^n Q_i$$

Q-ն i-րդ սուբյեկտի իրացման ծավալն է, իսկ ո-ը՝ շուկայի տնտեսվարող սուբյեկտների թիվը:

Շուկայի ընդհանուր ծավալը պարզելուց հետո որոշվում են տնտեսվարող սուբյեկտների բաժինները շուկայի ընդհանուր ծավալում՝

$$S_i = \frac{Q_i}{Q}, \text{ որտեղ}$$

$S_i$ -ը i-րդ տնտեսվարող սուբյեկտի բաժինն է շուկայի ընդհանուր ծավալում:

Ապրանքային շուկայի վերլուծության ժամանակ մեծ նշանակություն ունի նաև դրանում գործող տնտեսվարող սուբյեկտների շուկայական իշխանության ներուժի բացահայտումը, ինչը կարելի է իրականցնել այդ շուկայի համակենտրոնացման մակարդակը որոշելու և գերիշխող դիրք ունեցող կազմակերպություններին բացահայտելու միջոցով։ Համակենտրոնացման ցուցանիշները բնութագրում են հավասարության աստիճանը, ինչը կարող է ազդեցություն ունենալ շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա<sup>9</sup>:

Միջազգային պրակտիկայում շուկայի համակենտրոնացման աստիճանը որոշվում է մի շարք ցուցանիշների օգնությամբ, որոնցից են՝ համակենտրոնացման գործակիցը, Էնտրոպիայի գործակիցը, Լերների գործակիցը, Զինիի գործակիցը, Յերֆենդալ-Յիրշմանի ինդեքսը, Լինդի ինդեքսը, Յոլլ-Տայդմանի (Ոոզենբուլտի) ինդեքսը և այլն<sup>10</sup>. Սովորաբար ընդունված է այդ ցուցանիշները ստորաբաժանել երկու խմբի՝ ուղղակի ցուցանիշներ՝ Բենի, Տորինի և Լերների ինդեքսները, որոնց մեջությունը անմիջապես ցույց է տալիս ֆիրմայի ազդեցության անմիջական աստիճանը շուկայի վրա, և անուղղակի ցուցանիշներ՝ շուկայական համակենտրոնացման գործակիցը՝ Յերֆենդալ-Յիրշմանի, Յոլլ-Տայդմանի, Լինդի ինդեքսները, Էնտրոպիայի գործակիցը, շուկայական բաժինների լոգարիթմների դիմացերսիաների գործակիցը, որոնք բնութագրում են շուկայական իրավիճակն ամբողջությամբ<sup>11</sup>:

Այս ցուցանիշներից ամենատարածվածը շուկայական համակենտրոնացման գործակիցը (CR) և Յերֆինդալ-Յիրշմանի (HHI) ինդեքսներն են:

Շուկայական համակենտրոնացման գործակիցն արտահայտում է որոշակի թվով խոշոր վաճառողների կողմից իրացման ծավալների տոկոսային հարաբերությունը տվյալ շուկայում իրացման ընդհանուր ծավալին և հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$CR_n = \sum_{i=1}^n q_i, \text{ որտեղ}$$

<sup>9</sup> Ст. Конкуренция и антимонопольное регулирование, Нагл. аշխ., Еջ 65:

<sup>10</sup> Ст. **А. Яковлев**, Статистическая оценка уровня монополизации производства вестник статистики, 1990.

<sup>11</sup> Ст. **С. Г. Светунков, А. А. Литвинов**, Конкуренция и предпринимательские решения, Ульяновск, 2000, с. 88.

CRn-ը ո թվով ամենախոշոր իրացման ծավալ ունեցող տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման գործակիցն է որևէ ապրանքային շուկայում (%), իսկ զլ-ը ի-րդ տնտեսվարող սուբյեկտի ապրանքի իրացման բաժինը՝ շուկայի ընդհանուր ծավալում (%): Դարկ է նշել, որ համակենտրոնացման գործակիցը ԱՄՆ-ում կիրառվում է 1968 թվականից՝ շուկայի համակենտրոնացման աստիճանը գնահատելու համար, և եթե CR4 -ը գերազանցում էր 75%-ը, ապա սահմանափակումներ էին մտցվում միաձուլումների նկատմամբ<sup>12</sup>: Գործնականում ավելի հաճախ օգտագործվում են երեք (CR3) և չորս (CR4) խոշոր տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման մակարդակները բնութագրող ցուցանիշները:

Այս գործակցի եական թերությունն այն է, որ բացարձակապես զգայուն չէ շուկայում առաջատար ձեռնարկությունների բաժինների բաշխվածության նկատմամբ և ներկայացնում է կայուն վիճակ<sup>13</sup>: Օրինակ, CR3-ը 80% արժեքի դեպքում կարող է ենթադրել տարբեր իրավիճակներ, շուկայում առաջին չորս առաջատարներից յուրաքանչյուրն ունի 20% մասնաբաժին, կամ առաջինն ունի 75% մասնաբաժին, հաջորդ երեքը միասին՝ 5%: Շուկայում համակենտրոնացման թերություններից գերծ Յերֆենդալ-Յիշմանի հնդեքսը (HHI) որոշվում է հետևյալ կերպ.

$$HHI = \sum_{i=1}^n S_i^2, \text{ որտեղ } HHI \leq 10000 :$$

Որքան մեծ է այս հնդեքսի արժեքը, այնքան ավելի մեծ շուկայական իշխանությամբ են օժտված տվյալ շուկայում գործող խոշոր տնտեսավարող սուբյեկտները: Վերջինս միաժամանակ ցույց է տալիս, թե առավել փոքր տնտեսավարող սուբյեկտները ինչ տեղ են գրավում շուկայում և շուկայական իշխանությամբ օժտված տնտեսավարող սուբյեկտների հետ մրցակցելու ինչ հնարավորություն ունեն: Այս ցուցանիշի թերություններից մեկն այն է, որ հաշվարկելիս նկատի են առնվում բոլոր տնտեսավարող սուբյեկտների բաժինները՝ մինչդեռ դրանց թիվը գործնականում կարող է շատ մեծ լինել և դժվարություններ առաջանալ: Այդ պատճառով վերցվում են շուկայում առաջատար առաջին 50 ձեռնարկությունների ցուցանիշները: Թերություններից կարող ենք նշել նաև այն, որ շուկայում քիչ թվով մասնակիցների առկայության դեպքում HHI-ին ավելի մեծ արժեք է ձեռք բերում, քան ավելի շատ մասնակիցների դեպքում: Օրինակ, եթե համեմատենք երկու ճյուղերի հնդեքսները, որոնցից մեկը ներկայացված է չորս ձեռնարկություններով՝ յուրաքանչյուր 25% շուկայական մասնաբաժիններով, իսկ մյուսում՝ մեկը 40%, չորսը 10-ական և չորսը 5-ական տոկոս բաժիններով, ապա առաջին դեպքում՝ HHI=2500, երկրորդ դեպքում՝ HHI=2100: Ուստի այս հնդեքսը ավելի նպատակահարմար է կիրառել այն ապրանքային շուկաներում, որոնք հիմնականում աչքի են ընկնում մասնակիցների մեծ քանակությամբ:

Քանի որ ապրանքային շուկաներում համակենտրոնացման մակարդակի գնահատման վերոհիշյալ ցուցանիշներից յուրաքանչյուրը, առանձին վերցրած, թերություններ ունի, և առանձին դեպքերում կարող են որանք ոչ լիարժեք պատ-

<sup>12</sup> Конкуренция и антимонопольное регулирование, с. 73:

<sup>13</sup> Ст. С. Г. Светунков, А. А. Литвинов, Конкуренция и предпринимательские решения, Ульяновск, 2000, с. 92:

կերացում տալ համակենտրոնացման մակարդակի վերաբերյալ, ուստի նպատակահարմար է դրանց համալիր օգտագործումը:

ԱՊՀ երկրների հակամենաշնորհային քաղաքականության միջգերատեսչական խորհրդի կողմից հաստատված «Տնտեսական համակենտրոնացման նկատմամբ պետական հսկողության մողելային մեթոդական ցուցումներում» առաջարկվում է օգտագործել երկմակարդակ գնահատման սանդղակ, ըստ որի համակենտրոնացման գործակցի և Յերֆենդալ-Յիշման ինդեքսի հիման վրա շուկան բաժանվում է երեք տեսակի.

1. Բարձր համակենտրոնացված շուկա, երբ  $70\% < CR3 < 100\%$ , իսկ  $1800 < HHI < 10000$ , կամ  $80\% < CR4 < 100\%$ , իսկ  $2000 < HHI < 10000$ ,

2. Միջին համակենտրոնացված շուկա, երբ  $45\% < CR4 < 80\%$ , իսկ  $1000 < HHI < 1800$ ,

3. Չհամակենտրոնացված շուկա, երբ  $CR3 < 45\%$ , իսկ  $HHI - HN < 1000$ :

Միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվում է մեկ այլ մեթոդ՝ թեյնչ-մարթեթինգը, որը հնարավորություն է տալիս ավելի ճշշտ և օրինական գնահատել ճյուղում կազմակերպության մրցակցային դիրքը և նշակել հնարավոր գործողությունների համակարգ:

ճյուղի ընդհանուր վերլուծությունից հետո անհրաժեշտ է առանձնացնել ռազմավարական խմբերը՝ համանման ռեսուրսների միջոցով համանման ռազմավարություն իրականացնող կազմակերպությունները, որը հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալ ծեռնարկության մրցակցային միջավայրը: ճյուղում մրցակից ծեռնարկություններին կարող ենք ներկայացնել կոորդինատային հարթության վրա, որի համար անհրաժեշտ է ընտրել երկու բնութագրեր, որոնք բնորոշ են դիտարկվող ծեռնարկություններին, գրաֆիկի վրա տեղադրել վերջիններիս թվային նշանակությունները և շրջագծել ավելի մոտ գտնվող կոորդինատները: Եթե հիմական մրցակիցները բացահայտված են, ծեռնարկությունը կարող է նշակել և իրագործել շուկայում հաջող մրցակցելու ճշշտ ռազմակարություն:

Այս ամենի արդյունքում որոշվում են տվյալ ճյուղում հաջողության հասնելու կարևոր գործուները, ինչը ծեռնարկություններին հնարավորություն է տալիս ուշադրությունն ու ջանքերը կենտրոնացնել դեպի այն գործունեությունը, որն ավելի լավ կարող են իրականացնել, քան մրցակիցները:

Ակնհայտ է, որ միայն արտաքին միջավայրի վերլուծությունը բավարար չէ, որպեսզի կազմակերպությունն ապահովի վառ արտահայտված մրցակցային առավելություններ:

Անհրաժեշտ է վերլուծել նաև կազմակերպության ներքին միջավայրը, ինչի համար ավելի նպատակահարմար է սկսել ռեսուրսային մոտեցումներից: Ռազմավարական կառավարման բնագավառում հանդիսանալով նոր մոտեցում՝ այն իրականացվում է հետևյալ փուլերով՝ հայտնաբերել ռեսուրսները, պարզել և գնահատել հնարավորությունները, գնահատել ռեսուրսների կայունությունը և ծնակորել մի այնպիսի ռազմավարություն, որը թուլ կտա պարզել թերությունները ռեսուրսների առումով ու միջոցներ ներդնել դրանց շտկման համար:

Զեռնարկության ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և մարտահրավերների գնահատման համար միջազգային պրակտիկայում կիրառվում է

SWOT վերլուծությունը: SWOT վերլուծության նպատակն է բացահայտել այն արտաքին և ներքին գործոնները, որոնք կարող են առավել վտանգավոր ազդեցություն ունենալ ձեռնարկության վրա:

Ռազմավարական վերլուծության ընթացքում այլընտրանքների ուսումնասիրության համար առավել հատկանշական են միջազգային պրակտիկայում լայն կիրառում ստացած ի. Անսոֆֆի «ապրանքներ-շուկաներ», Մ. Պորտերի մրցակցային ռազմավարության, Մակ-Քինսի պորտֆելային վերլուծության, Բուստոնի խորհրդատվական խմբի (Բ) և ADL-LC մատրիցաները:

Ենթաքարտ ռազմավարական վերլուծության և ռազմավարության ընտրության համար կիրավող նշված մոդելները և վերջիններիս համեմատական վերլուծությունները հնարավորություն են տալիս վերհանել այնպիսի չափորոշիչներ, որոնց գուգակցումը ծնավարում է մրցակցային ռազմավարության համակարգային վերլուծություն: Դենց այդպիսի մոտեցմանը բնութագրվող մրցակցային ռազմավարության իրագործումն էլ առավելագույնս նպաստավոր պայմաններ կստեղծի ձեռնարկության ֆինանսատնտեսկան գործունեության արդյունավետության բարձրացման համար:

Այսպիսով, ռազմավարական վերլուծության այսպիսի մոտեցումը հնարավորություն կտա կազմակերպություններին հնարավորինս ճիշտ գնահատել մրցակցային իրավիճակը շուկայում և ընտրել մրցակցային ռազմավարության մշակման արդյունավետ տարրերակներ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Рыночная экономика. Учебник в трех томах., т.1, Теория рыночной экономики, М., "СОМИН-ТЕК", 1991.
2. *E. B. Попов, Б. Клюев*, Методы маркетинговых исследований. Екатеринбург: Урал.гос.тех.унт., 1996.
3. *Г. Л. Азое*, Конкуренция, анализ, стратегия и практика. М., "Центр экономики и маркетинга", 1996.
4. *W. Lasher*. Strategic Thinking for smaller Businesses and Divisions, Blackwell, Maiden, MA. 1999.
5. Ապրանքային շուկաների ծավալների որոշման կարգ, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի պաշտոնական տեղեկագիր, N 1, 2002:
6. 2004թ. Վետրվարի 23-ից մարտի 5-ը Վիեննայում կայացած «Մրցակցային քաղաքականություն» թեմայով սեմինարի նյութերը:
7. *С. А. Черненко*, Конкуренция и антимонопольное регулирование. Границы товарных рынков, Конкуренция. Вестник антимонопольного комитета Украины, 2002.
8. *А. Яковлев*, Статистическая оценка уровня монополизации производства, Вестник статистики, 1990.
9. *С. Г. Светунков, А. А. Литвинов*, Конкуренция и предпринимательские решения, Ульяновск, 2000.
10. Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի պաշտոնական տեղեկագիր, 2001, N 1:

## **СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ РАЗРАБОТКИ КОНКУРЕНТНОЙ СТРАТЕГИИ ПРЕДПРИЯТИЯ**

*B. O. Arakelyan  
A. L. Melkonyan  
A. A. Sargsyan*

В статье обсуждается разработка процедур для конкурентной стратегии в современных рыночных отношениях и предлагается новый подход, который учитывает изменения внешней и внутренней среды предприятия.

### **MODERN PROBLEMS OF DEVELOPING A COMPETITIVE STRATEGY OF ENTERPRISES**

*V. H. Arakelyan  
A. L. Melkonyan  
A. A. Sargsyan*

In the article the working out of procedures of competitive strategy in modern market relations is discussed and the new approaches are offered which considered changes of the external and internal environment of the enterprise.

## **ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՎԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ**

**Վ. Ռ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**  
*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*  
**Ր. Ջ. ՍՈՒԹԻԱՍՅԱՆ**  
*Տնտեսագիտության թեկնածու*  
**Ա. Ջ. ԴՈՆՈՅԱՆ**  
*ԴՊՃ՝ ասպիրանտ*  
**Մ. Ժ. ՄԻՄՈՆՅԱՆ**  
*ԴՊՃ՝ ասպիրանտ*

Նորամուծական գործընթացի խրախուսման ֆինանսատնտեսական մեխանիզմի ձևավորումը երկրի տնտեսության տարբեր հատվածներում իրականացնելիս անհրաժեշտ է հիմնվել զարգացած շուկայական հարաբերություններ ու նեցող երկրների փորձի վրա, քանի որ մեր հանրապետությունում նորամուծական քաղաքականությունն՝ առաջին՝ անբավարար է, երկրորդ՝ կապված չէ շուկայական գործիքների հետ: Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հանրապետության տնտեսության առանձնահատկությունները, առաջարկի և պահանջարկի, կոմերցիոն ռիսկի մակարդակի, ցածր կամ թույլ նորամուծական ենթակառուցվածքի, օրենսդրական ակտերի բացակայության և դատադրավական համակարգերի գործունեության ցածր մակարդակի, շուկայի և պետական կա-